զպատմէնս նոցին արձանագրեալ հաստատեցաւ 'ի Դիւանս և 'ի Դատարանս։ Դուք որ Վէզիր, Դատաւոր, Քաղաքապետ, և այլք էք, 'ի ժամանելն և 'ի գիտելն ձեր՝ արձանագրեսջիք 'ի Դատարանի և տայջիք 'ի ձեռս ազգին Հայոց· զի զհրովարտակս Սէլիմայ տուեալ երկուց ազգաց հիմն ընտրելով ըստ զօրութեան Իլամին առնել և մշանջենաւորապէս գործադրել, զգուշութեամբ խնամ կալջիք, զի և ոչ 'ի միւմ ժամանակի հակառակն երեւեսցի և մի համարձակեսջիք Կայսերական հրովարտակիս ընդդէմ գործելոյ· հրամայեցի՝ 'ի հաստատիլ սորին հնազանդիլ և հետեւիլ՝ որպէս գրեցաւ 'ի վեր անդր, գործադրութեան խնամ կալջիք, եւ հակառակելոյ կարի զգոյշ լինիջիք· (١٢٢٨, 'ի ١ Մուհարրէմի)։

ԳԼՈՒԽ ԻԷ·

Որոշումն գործակալաց Դրան վասն խնդրոյն Հայոց գնալ Նոցա Յերուսաղէմ։ Բանք Նուրի Էֆէնտեայ և Կուսակալին Դամասկոսի։ Գործ Դատաւորին։ Ժողով 'ի Դատարանի երկիցս։ Քննութիւն Հայոց՝ ընդդիմութիւն Դատաւորին։ Ժողով 'ի Ս· Յարութիւն։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ զկնի տալոյ Արքային Մահմուտայ զհրովարտակս երկուց ազգաց, որոշեաց ըստ խնդրոյ Հայոց, իբր դատաւոր գործոյն (միւվէլլայ) հարամէյն միւֆէթթիշի Պաշմագճի զատէ Զէքի Էֆէնտի· բայց երթալ նորին անկարելի գոլով, որոշեցաւ փոխանորդաբար 'ի տեղի նորա Ստամպօլ Դատարանը վագայէ քեաթիպլի Մէհէմմէտ Նուրի Էֆէնտի· Բաշիտ Մուստաֆա Էֆէնտի Խոճաքեան· Մէհէմմէտ Էֆէնտի ճարտարապետ, հրովարտակաւ Արքայի երթալ յԵրուսաղէմ գործադրել զհրովարտակն Հայոց· արձանագրել 'ի դատարանի, որոշել զբաժանորդ և զսեփհական տեղիս, քննել ըզնորոգեալ և զչինեալ տեղիս 'ի Յունաց, ստուգել զկետեւակ զերիս ազգս, թէ որոյ ազգի են հետեւողք, զի Յոյնք այնդէին թէ մեր են։